# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ.Լեռնավան, Հեռ. (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԻՆ**

N 56
19 *մայիս 2016թ.*

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ եմ ներկայացնում Լեռնավան համայնքի ղեկավարի N 16, ավագանու N 10 որոշումները:

Առդիր 2 թերթ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 10

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.04.2016թ. թիվ 16 նիստի արձանագրային որոշումը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 2781108 վկայականը, Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ, 89-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 որոշման պահանջներով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լեռնավան համայնքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման ներքին ցանցը և օրվա կարգավորիչ ջրամբարները իր կառուցման սպասարկման համար զբաղեցրած հողամասով անհատույց նվիրատվության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանը ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ին:
2. Հայաստանի Հանրապետության ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վերը նշված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՍՏՅՈՊԱ
2. ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԲԵԳԼԱՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ
6. ՉԱԽԱԼՅԱՆ ՆՈՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69 , lernavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 16

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.04.2016թ. թիվ 16 նիստի արձանագրային որոշումը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման թիվ 2781108 վկայականը, համայնքի ավագանու որոշումը համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման ներքին ցանցը և օրվա կարգավորիչ ջրամբարները իր կառուցման սպասարկման համար զբաղեցրած հողամասով անհատույց նվիրատվության կարգով տրամադրելը Հայաստանի Հանրապետությանը ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ին: Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասով, ՀՀ «Հողայինօրենսգրքի» 60-րդ, 89-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387 որոշման պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Լեռնավան համայնքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման ներքին ցանցը և օրվա կարգավորիչ ջրամբարները իր կառուցման սպասարկման համար զբաղեցրած հողամասով անհատույց նվիրատվության կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետությանն ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ին:

2. Հայաստանի Հանրապետության ի դեմս Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել վերը նշված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

գ.Լեռնավան